ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հոկտեմբերի 9-11-ը

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Շտուտգարտ)

գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

   Արամ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (ք. Շտուտգարտ), 2019 թվականի հոկտեմբերի 9-11-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Գերմանական Տնտեսական Միավորում (Deutscher Wirtschaftsverband)

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն «Գերմանիա-Հայաստան» առաջին ներդրումային համաժողովին («DEUTSCH - ARMENISCHES WIRTSCHAFT UND INVESTMENT 2019»)

6. **Քննարկված թեմաները**

   - Գործարար և ներդրումային միջավայրը Հայաստանում
   - Տնտեսական բարեփոխումների օրակարգ
   - Հայաստանը որպես ԵՄ - ԵԱՏՄ կամուրջ
   - Գործարար հնարավորությունները Հայաստանում
   - Բարձր տեխնոլոգիաներ և թվային տնտեսություն
   - Ներդրումների համար գրավիչ տնտեսության ճյուղեր

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Գերմանիայի Շտուտգարտ քաղաքում հոկտեմբերի 9-11-ը անցկացվող Հայ մշակույթի օրերի շրջանակներում Հայաստանում «Գերմանական Տնտեսական Միավորման» կողմից նախաձեռնվել է «Գերմանիա-Հայաստան» առաջին ներդրումային համաժողովի անցկացումը: Միջոցառման նպատակն էր, ստեղծել երկխոսության հարթակ երկու երկրների մասնավոր հատվածների միջև, ինչպես նաև ՀՀ պետական հատվածի կողմից ներկայացնել Հայաստանում տեղի ունեցող փոփոխությունները տնտեսական ոլորտում, ներդրումային գրավչություններն ու գործարար հնարավորությունները:

Համաժողովի ձևաչափը նախատեսում էր պաշտոնական ելույթներ, շնորհանդեսների ներկայացում, պանելային քննարկումներ, հարց ու պատասխանների հատված, B2B հանդիպումներ մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև:

Միջոցառմանը հայկական կողմը ներկայացված է եղել պետական և մասնավոր հատվածների մասնակցությամբ: Հայկական կողմից միջոցառմանը մասնակցել և բացման խոսքերով ելույթ են ունեցել ԳԴՀ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան պարոն Աշոտ Սմբատյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական Արամ Վարդանյանը: Միջոցառմանը մասնակցում էին նաև Հայաստանի մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Գերմանական կողմից բացման խոսքով հանդես է եկել տնտեսական հարցերով պետքարտուղար պարոն Թոմաս Բարեյսը: Միջոցառմանը մասնակցում էին գերմանական մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Քննարկումների ընթացքում հայկական կողմը ներկայացրել է տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գործարար և ներդրումային միջավայրի բարեփոխումներն ու իրավակարգավորումները, ներդրումային հնարավորություններն ու ներդրումների համար նպաստավոր տնտեսության ճյուղերը:

8. Գործուղվողները, ստորագրությունը, ամսաթիվը

Արամ Վարդանյան

14.10.2019թ.